ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվանիստի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում «Քիմիա» առարկայից թափուր աշխատատեղ՝ (շաբաթական 11 դասաժամ), «Հասարակագիտություն» առարկայի ուսուցչի թափուր աշխատատեղ՝ (շաբաթական 8 դասաժամ), «Դասվար»-ի թափուր աշխատատեղ՝ (շաբաթական 20 դասաժամ):

Մրցույթը անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստային փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից մշակած հարցաշարերի: Հարցազրույցի փուլի հարցաշարերը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Դիմում՝ (Ձև1), մեկ լուսանկար՝ 3x4 չափի
2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)
3. Անձը հաստատող փաստաթուղթ,
4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան աշխատանքի ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույքի պատճեն (առկայության դեպքում)
5. Ինքնակենսագրություն (Ձև 5),
6. Այլ պետության քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատանքի իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7. ՀՀ-ում արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9. Որակավորման տարրակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթղթեր:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024 թվականի նոյեմբերի 12-ից ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կայքէջի հրապարակման օրվանից մինչև 2024 թվականի նոյեմբերի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024 թվականի նոյեմբերի 29-ին, ժամը՝ 14:00-ին «ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվանիստի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:

Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ գ. Արծվանիստ. 16/ փ. 10/2

Տեղեկությունների համար զանգահարել՝ 093 38 12 32 հեռախոսահամարով: